

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պարմական գիտությունների թեկնածու

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԾԵՄԱՐԱՆԻ ԱՆՅԱԾ ՈՒՂԻՆ՝

Այսօր հավաքվել ենք հայոց նվիրական այս վայրում՝ նշելու XIX դ. վերջերի և XX դ. սկզբների հայ մշակույթի ամենանշանավոր կենսորոններից մեկի՝ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ծննդարանի հիմնադրման 130-ամյակը։ Միովի գնահատելով Գևորգյան Ծննդարանի խաղացած դերը հայ կյանքում՝ կարելի է անվարան ասել, որ փվյալ ժամանակաշրջանն անհնարին է պարկերացնել առանց ճննարանի գործունեության։ Այն ըստ էության արևելահայ ողջ մշակույթն է, մանկավարժությունն ու դպրոցը, հայագիտությունն ու հասարակական-քաղաքական կյանքը, ազատագրական շարժումը, Եկեղեցին ու հոգևոր կյանքը։

Այսօր, հորելյանական այս խանդավառ մթնոլորտում, անհրաժեշտ է արժանին մատուցել ու հիշել բոլոր այն անձանց, որոնց անդու ջանքերի գնով հառնեց լույսի ու գիտության այս փառարը։ Վաղուց էր հասունացել Ս. Էջմիածնի հովանու ներքո բարձրագույն հոգևոր ուսումնական հաստատություն հիմնելու անհրաժեշտությունը։ Էջմիածնում գործող Ժառանգավորաց դպրոցն այլևս չէր բավարարում Եկեղեցու օրավուր աճող պահանջները։ Եկել էին նոր ժամանակներ, և Հայոց Եկեղեցուն անհրաժեշտ էին նոր, ժամանակակից գիտությամբ զինված կարող հոգևորականներ, ուսուցիչներ։ Նման մի ուսումնական հաստատության անհրաժեշտության մասին բազմիցս նշել էին Սրբ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Ս. Շահագիզը, Բաֆին, Գր. Արծրունին և ուրիշներ։ Մակայն այդ վիթխարանշանակ գործը հնարավոր եղավ իրականացնել միայն Ամենայն Հայոց երկու Հայրապետների՝ Գեվորգ Դ Կոստանդնուպոլսեցու և Մակար Ա Թեղուրցու փրականական ջանքերի շնորհիվ։

Գևորգ Դ Կաթողիկոսը Լուսավորչի գահ բարձրանալուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադրման աշխատանքներին։ Այն դարձավ նորընդիմ Կաթողիկոսի ամենօրյա մտածումների հիմնական առարկան և հետագա գործունեության գլխավոր ուղենիշը, կյանքի նպատակը։ Ահա թե ինչու ռուսաց Ալեքսանդր II ցարի հետ հանդիպման ժամանակ (1866 թ.) Հայրապետը խոսեց նաև Ծննդարանի հիմնադրման մասին, որին հավանություն տվեց կայսրը։ Այսպիսով, Ծննդարան բացելու հարցը վճռված էր։ Մակայն կարևորվում էին առաջնային հետևյալ հարցերը՝ որտեղ պետք է կառուցվեր Ծննդարանը և նյութական ինչ միջոցներով։

Թեև եղան բազմաթիվ առաջարկություններ, սակայն Գևորգ Զորորոզը վճռականորեն պնդեց, որ Ծննդարանը չպետք է հեռացնել Մայր Աթոռից, այն պետք է կառուցել նրա հարևանությամբ ու հովանու ներքո։ Իսկ նյութական միջոցները հավաքվեցին փարբեր կրակների և նվիրատվությունների հաշվին։ Անհրաժեշտ է շեշտել, որ Ծննդարանի կառուցման համար զգալի գումարներ փրամադրեց մոսկվաբնակ մի ազնվագույն հայորդի՝ ազգային

* Որպես զեկուցում կարդացվել է Գևորգյան Հոգևոր Ծննդարանի 130-ամյակին նվիրված միջոցառմանը Ս. Էջմիածնում նոյեմբերի 3-ին։

բարերար Հովհաննես Հովնանյանը: Մի զարմանալի ու գեղեցիկ զուգադիպությամբ Ճեմարանի այսօրվա վերակառուցումը հնարավոր դարձավ մեկ այլ ազգային բարերարի՝ Գևորգ Հովնանյանի ազնիվ նվիրատվության շնորհիվ: Թեև այս երկու Հովնանյանները միմյանց ազգական չեն, սակայն երկուսն էլ լեցուն են ազգին ու Եկեղեցուն անշահախնդրորեն ծառայելու ոգով:

Գևորգյան Ճեմարանի շինարարությունն սկսվեց 1869 թ. մայիսին և ավարտվեց 1873 թ. վերջերին: 1874 թ. ամռանը Կոնստանդնուպոլսի ունեցավ սաների ընտրությունը և, ի վերջո, 1874 թ. սեպտեմբերի 28-ին՝ Ս. Գևորգ Զորավարի փոխին, Կոնստանդնուպոլսի հասարակության բացման հանդիսավոր արարողությունները: Կանոնավոր պարապմունքներն սկսվեցին սեպտեմբերի 30-ից: Թեև Ճեմարանի պաշտոնական անվանումն էր «Ս. Գևորգյան Ճեմարան Սրբոյ Էջմիածնի», սակայն ժամանակի ընթացքում այն փոխարինվեց «Գևորգյան Ճեմարան»-ով: Այս անվանումը, որն այնքան սահուն ու աննկար մուրփ գործեց մեր գրավոր ու բանավոր խոսքի մեջ, լավագույն հուշարձանը եղավ բազմերախ Կաթողիկոսի հիշատակին, թեև ինքը դյուզն-ինչ չափով փոքր չքվեց նման անվանման հասարակությանը:

Չափազանց կարևոր էր նաև Ճեմարանն ուսուցչական բարձրորակ կադրերով ապահովելու հարցը, ո՞րն պետք է վստահվեր այդ պարասխանալի գործը: Հենց սկզբից Կոնստանդնուպոլսի համար հրավիրվեց հայրնի հայագետ Գաբրիել Եպիսկոպոս Այվազովսկին, իսկ ուսուցիչներ՝ Հովհաննես վարդապետ Երեմյանը, Սուքիաս վարդապետ Պարզանցը, Արիստակես վարդապետ Սեդրակյանը, Գևորգ վարդապետ Սուրենյանցը (ապագա Գևորգ Ե Կաթողիկոսը): 1878 թ. Ճեմարան են հրավիրվում ուսուցչական նոր, կարող ուժեր՝ Խորեն Սրեփանես, Վահան Բասարամյան, Վարդան Աբովյան, Կարապետ Կոստանյանց, Մկրտիչ Պալյան: 1881 թ. փետույն 12-ին հայրնի մանկավարժ Արշակ Նահապետյանը, որը Ճեմարան եկավ համախոհ մի խումբ ընդիր մրավորականների հետ՝ Սեդրակ Մանդինյան, Սրեփանոս Պալասանյան, Հովհաննես Հովհաննիսյան, Փիլիպպոս Վարդանյան, Սարգիս Գաբրիելյան և ուրիշներ:

Ճեմարանն իր առաջին շրջանավարտները փվեց 1882-1883 ուսումնական տարում: Մրահողիչն այն էր, որ նրանցից և ոչ մեկը ցանկություն չէր հայտնել հոգևորական դառնալու, իսկ, ինչպես նշվեց, Ճեմարանի գլխավոր խնդիրներից մեկը այդ էր լինելու: Պարզապես, անշուշտ, Ճեմարանում կրոնագիտական և աստվածաբանական առարկաների դասավանդման անբավարար մակարդակն էր: Անհրաժեշտ էր Ճեմարան հրավիրել որևէ հմուտ աստվածաբանի: Ահա այս խնդիրները պետք է լուծեր նորընտիր Կաթողիկոսը՝ Մակար Ա Թեոփիլոսը: Նրա առաջարկությամբ նշված առարկաների դասավանդմանը ձեռնամուխ եղավ Կարինի թեմի առաջնորդ, հայրնի աստվածաբան Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանյանը: Նրա շնորհիվ է, որ 1889 թ. հունիսին Ճեմարանի փետույն 12-ին Արշակ Նահապետյանը և երեք սաներ՝ Կարապետ Տեր-Մկրտչյանը, Գևորգ Չորեքյանը (ապագա Գևորգ Զ Կաթողիկոսը) և Գարեգին Հովսեփյանը (Մեծի Տանն Կիլիկիոյ ապագա Կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանը), ստացան սարկավագության աստիճան:

Ձեռնադրությունները շարունակվեցին կանոնավորապես, և զգալի թվով Ճեմարանականներ իրենց նվիրեցին Հայոց Եկեղեցու սպասավորության վեհ գործին: Հայոց Եկեղեցին համարվեց երիտասարդ, կարող ուժերով, որոնք դարձան մեր հոգևոր զարթոնքի սերմնա-

ցանները: Ճեմարանի լավագույն շրջանավարտներից շարքերն ուղարկվում էին Եվրոպա այնպիսի շարունակելու իրենց ուսումնառությունը: Ճեմարանականների մի զգալի մասը գնաց դեպի դպրոցները, մի մասն էլ ընտրեց գիտության և մշակույթի բնագավառները:

Սակայն Ճեմարանն առաջին հերթին հռչակվեց հայագիտությանն ու մշակույթին իր բերած ավանդով: Ճեմարանի սաներ են եղել. **գրողներ՝ Ա. Ահարոնյանը, Ա. Բակունցը, Դ. Դեմիրճյանը, Ավ. Իսահակյանը, Լեո Կամսարը, Մ. Խերանյանը, Կարա-Ղևրվիշը, Դ. Մեյրիքյանը, Վ. Միրաքյանը, Ն. Մկրտչյանը, Լևոն Շանթը և ուրիշներ, գրականագետներ՝ Մ. Խոյանը, Վ. Միրաքյանը, Ն. Մկրտչյանը, Ա. Զամինյանը, Պ. Մակինցյանը և ուրիշներ, Արեղյանը, Ն. Աղբալյանը, Ե. Մադաթյանը, Ա. Զամինյանը, Պ. Մակինցյանը և ուրիշներ, քանասերներ՝ Ա. Աբրահամյանը, Խ. Կանայանը, Ս. Կանայանը, Ս. Հարությունյանը, Ա. Տեր-Միքելյանը, Սյր. Մալխասյանցը, Ե. Տեր-Մինասյանը և ուրիշներ, պարմաքաններ՝ Ն. Աղոնցը, Ա. Արեղյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Ակուլյանը, Բ. Խալաթյանը, Գ. Գյուզալյանը, Ա. Խաչատրյանը, Վ. Ռշտունին և ուրիշներ, երաժշտագետներ՝ Ա. Բրուսյանը, Կոմիտասը, Ս. Մելիքյանը, Ա. Շահմուրադյանը, Ա. Պարմազյանը, Գ. Սյունին և ուրիշներ, ազգային-ազատագրական շարժման գործիչներ՝ Կ. Գուլակսըզյանը, Գ. Խաժակը, Ս. Կուկունյանը, Ա. Վռամյանը, Փարամազը և ուրիշներ, հասարակական-քաղաքական ու պետական գործիչներ՝ Ա. Դարբինյանը, Ս. Թորոսյանը, Ա. Խանջյանը, Ա. Խոնդկարյանը, Վ. Խորենին, Խ. Կարճիկյանը, Ա. Միկոյանը, Ա. Մռավյանը, Ս. Վրացյանը և ուրիշներ, նշանավոր հոգևորականներ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գաբրելին Ա, Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը, Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրաբյանը, Բագրատ արքեպիսկոպոս Վարդազարյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս), Ռուբեն արքեպիսկոպոս Մանասյանը և շատ ուրիշներ:**

Ճեմարանի շրջանավարտներից է եղել նաև ինքնուս գյուրարար, ապոմի միջուկը ուսումնասիրող Վահագն Դեմիրճոլյանը, որը րեսականորեն առաջինը հիմնավորեց ապոմային ռուբի սպեղծման հնարավորությունը:

Ճեմարանի արդյունաշար գործունեությունն ընդհատվեց 1917 թ. վերջերին, երբ ընթացող առաջին աշխարհամարտի պայմաններում նրա շենքը տրամադրվեց զինվորական հրամանատարությանը: Հետագայում 1918-1920 թթ., ինչպես նաև խորհրդային կարգերի բարդ ու դժվարին տարիներին փորձեր արվեցին Ճեմարանը բացելու ուղղությամբ, սակայն ապարդյուն: Եվ միայն 1945 թ. Գևորգ Զ Չորեքյանի հետևողական ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ վերաբացել Ճեմարանը: Անհրաժեշտ է նշել, որ Գևորգյան Ճեմարանի ուսումնական բազայի հիման վրա և ուսուցչական կազմով ու սաներով է ձևավորվել Երևանի պետական համալսարանի դասախոսական կազմը (1919-1920 թթ.), որով Ճեմարանական լավագույն ավանդույթներն այնուհետև շարունակվեցին Երևանի պետական համալսարանի միջոցով:

Ճեմարանի հիմնադրումից անցել է 130 տարի: Եվ այսօր, երբ դարձյալ հայացք ենք ձգում նրա անցած ուղուն, մեր առջև հառնում են Ճեմարանի ուսուցիչների ու սաների, մասնավորապես նրա վերաբնույց կաթողիկոսների անզուգական կերպարները:

Բյուր օրհնություն նրանց արդար հիշատակին: